«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
N ASBT05-2002-C (2002)
«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 5-րդ գումարման Հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝ 20 փետրվարի 2020 թ.

Անցկացման վայր՝ «Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11;

Նիստի սկիզբ՝ 09:30

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝

Ռուբեն Հարությունյան- ՀԽ նախագահ

Անահիտ Ադամյան

Անահիտ Հովհաննիսյան

Արիս Բերբերյան

Արթուր Ալավերդյան

Հակոբ Հակոբյան

Հովհաննես Աթաբեկյան

Սարգիս Բաղալյան

Վասկեն Յակուբյան

Նիստին չեն մասնակցել՝

Տիգրան Հարությունյան:

Նիստին մասնակցել են Հոգաբարձուների խորհրդի տասներկու անդամներից (երկու տեղը թափուր է) ինը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին

Արամ Փախչանյանը (գործադիր տնօրեն),

Դավիթ Սահակյանը (գործառնական տնօրեն),

Նելլի Բալայանը (ֆինանսական համակարգող),

Առանց ձայնի իրավունքի նիստի լրացուցիչ մասին մասնակցում էին

Անահիտ Հարությունյան (ԱԲ քննական կենտրոնի համակարգող),

Արմեն Սիմոնյանը (Գիտելիքների և հմտությունների գնահատման կենտրոնի տնօրեն),

Սոնա Կոշեցյանը («Այբ» հիմնադրամի տնօրեն)

Աշոտ Մկրտչյան («Այբ» հիմնադրամի ՀԽ-ի անդամ):

Նիստի քարտուղար ընտրվեց՝ Սիրանուշ Սուքիասյանը:

Հարց 1. (Օրակարգի հաստատում)

Որոշում՝ հարց 1:

Հաստատել ՀԽ-ի նիստի 2020 թվականի փետրվարի 20-ի օրակարգը :
Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 2. (Նախորդ նիստի արձանագրության հաստատում)

Որոշում՝ հարց 2:

Հաստատել նախորդ նիստի արձանագրությունը ըստ հավելված 1-ի:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 3. (Նիստի կազմակերպչական հարցեր)

Հարց 4. (Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն):

Առաջարկ չեղավ:

Հարց 5 (Ուսումնական տարվա դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ):

Հարց 6 (Հաշվետվություն «Այբ» դպրոցի Աշխատանքային պլանի առաջընթացի վերաբերյալ՝ ի հետյումն հնգամյա ռազմավարական պլանի իրականացմանը)

Հարց 7 («Այբ» Մենթորության Ծրագրի շարունակականությունն ու բարերարների ներգրավումը ծրագրում)

Որոշում՝ հարց 7:

Որոշվեց ձևավորել Մենթորության Ծրագրի հանձնաժողով, որի հետ համատեղ դպրոցի թիմը կմշակի ծրագրում բարերարների ներգրավվածության ձևաչափի առաջարկ և կներկայացնի ՀԽ-ի դիտարկմանը:

Հանձնաժողովի անդամներն են՝

Արիս Բերբերյան

Հակոբ Հակոբյան

Սարգիս Բաղայյան

Ննա Հակոբյանին հանձնարարել կազմակերպել մի քանի հանդիպումներ հանձնաժողովի հետ, հաջորդ նիստում Մենթորության ծրագրի գործընթացի նոր ձևաչափը ներկայցնել:
Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 8 (Գործադիր տնօրենի ընտրության գործընթաց, հանձնաժողովի գործառույթների ֆ իրավասությունների հստակեցում)

Որոշում՝ հարց 8:

Որոշվեց.

- Գործադիր տնօրենի որոնման հանձնաժողովը իրավասու է ընդունել որոշումներ

-հանձնաժողովը կարող է ներգրավվել էքսպերտների

-ներգրավվել Արտակ Հովհաննիսյանին որպես էքսպերտ

-Վերջնական կարճ ցանկում ներգրավված 3 թեկնածուներին ներկայացնել ՀԽ-ին

-հանձնաժողովի անդամներին հաջորդ նիստին ներկայացնել համառոտ գործընթաց, ինչ աջակցություն է պետք ՀԽ-ից:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 9 (2019-2020 ուսումնական տարվա բյուջեի կատարողական ֆ հաստատում, կոմիտեի անդամների եզրակացություն)

Որոշում՝ հարց 9:

Որոշվեց հաստատել 2019-2020 թթ ուս. տարվա բյուջեն ըստ հավելված 5-1-ի, մյուս նիստին ներկայացնել կրճատած ծախսերով տարբերակ:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 10. (Կրթաթոշակների հավաքագրում):

Հարց 11. (Արձանագրությունների հրապակում):

Որոշում՝ հարց 11:

Որոշվեց արձանագրությունները հրապարակել կարճ տարբերակով՝ միայն հարցերը և որոշումները:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 12 (Մանկավարժական խորհրդի գործունեության փոփոխված կարգ):

Հարց 13. (Հաջորդ նիստի օրվա հաստատումը):

Որոշում՝ հարց 13:

Որոշվեց ՀԽ-ի հաջորդ նիստը հրավիրել մայիսի 7-ին:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 14. (Կանոնադրության փոփոխություն՝ անդամների քանակի վերաբերյալ):

Որոշում՝ հարց 14:

Որոշվեց հաստատել փոփոխությունները ըստ հավելված 8-ի:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 15. (ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր):

1. PR ռազմավարություն: Ներկայացնող՝ Արամ Փախչանյան
2. Ներկայացնել ՀՀ-ում «Այբ»-ի նման դպրոցների մասին տեղեկատվություն: Ներկայացնող՝ Արամ Փախչանյան
3. Մանկավարժական խորհրդի կարգ: Ներկայացնող՝ Արամ Փախչանյան
4. Ներկայացնել բյուջեի ծախսերի կրճատված տարբերակը: Ներկայացնող՝ Դավիթ Սահակյան
5. Մենթորության ծրագրի գործընթացի նոր ձևաչափի ներկայացում: Ներկայացնող՝ Աննա Հակոբյան
6. Գործադիր տնօրենի որոնման հանձնաժողովի հաշվետվություն:

Հարց 16. (Նիստի հիմնական մասի ավարտ): **Հանդիպումն ավարտվեց ժամը 12:40-ին:**
Հարց 17. (ԱԲ-ի քննական կենտրոնի ղեկավարների հետ հանդիպում):
Հարց 18. (Նիստի լրացուցիչ մասի ավարտ): **Հանդիպումն ավարտվեց ժամը 14:00-ին:**